

շե Ռւրալ գետ ուրիշ ծառ չեմք տեսներ, բայց եթէ կաղամախ, և հեռաւորութիւնն է 500 քիլոմետր:

«Թուրքաստան սահմանակից է Ռուսիոյ: Ռուսիա արդէն 'ի վաղուց հետէ կը տարածուի այս ընդարձակ երկրին վրայ. Եկած է հոն ապահովելու իր վաճառականութիւնը և սանձելու անսանձ ժողովուրդները: Իրեն իշխանութեան տակ կ'առնու զանոնք, և կը հաստատէ զինուորական գաղթականութիւններ: Յամին 1867 նուանեց զխոքանտ որ թուրքաստանի արևմտակողմը կ'իյնայ. 1868ին յառաջեց մինչև 'ի Սմբրդանտ, և գրաւեց զՊուխարա: Այսպէս կը մօտենայ ոտն առ ոտն անգղիական երկիրներուն: Սմբրդանտէն Պալիսի և Քապուլի ուղղութեամբ Ռուսք 1000 քիլոմետր տեղ հեռու կը գրտնուին Փէշաւուրէն, որ Անդղիացւոց յառաջացեալ կէտն է»:

Բայց Անգղիոյ երկիրւղը միայն այն չէր որ Ռուսիոյ մերձաւորութիւնը կը քարանգաւոր ըլլալ իրեն: Կը վախէ դարձեալ որ չըլլայ Ռուսիա պաշտպանութիւն ընէ Անգղիոյ լուծէն ազատել ուղղ ժողովրդոց, կամաց կամաց ապրատամբեցընէ զՀնդիկս և թուրքաստանի բարբարոս ժողովուրդներն: Եւ ասիկա արդարացի երկիրւղ մ'է. Եթէ պատերազմ ծագելու ըլլայ, Ռուսիա ամենայն հնարք պիտի 'ի գործ դնէ չկորուսանելու զայն: Ռուսիա քան զԱնգղիա աւելի փոյթ կը ցուցնէ տիրելու ասիկական ժողովրդոց վրայ:

Ռուսիա Պոնաբարդի մտածածը 'ի գործ դնէ. այն է անգղիական զօրութիւնն 'ի Հնդկաստան 'ի մնաս իրեն գործածել: Տագնապաժամը կրնայ դեռ ևս երկարիլ. բայց պիտի ծագի պատերազմը կանուխ կամանագան: Եւրոպա պէտք էր վերջ տալ այս խնդրոյն Արևելեան խնդրոյն հետ. և չընելով ահաւասիկ կը սաստկանայ և ասիական խնդիր մը կը դառնայ:

Անիմանալի բան մ'էր, որ մինչ անգղիացի մեծ քնագէտ մը կը մեկնէր իմաստնոց այն համբաւաւոր հայեցողու-

թիւնն՝ կոհիւ վասն եռքեան, կար Անգղիոյ մէջ քաղաքավարչական դրագոց մը որ սկիզբ կը դնէր իրեն եռքեան առանց կոռուոյ: Բայց մենք կ'ըսեմք որ եթէ Անգղիա կ'ուղէ յոտին կալ, պէտք է որ կոռուի. և որովհետեւ Ռուսիա է որ կամաց կամաց պիտի ծանրանայ Եւրոպիոյ վրայ, և պիտի բռնադատէ զԱնգղիա 'ի կոիւ, անոր համար կոիւն ընդհանուր Եւրոպական պիտի ըլլայ: Այս այսպէս պիտի ըլլայ, վասն զի սպառնական է, վասն զի պատմական ճշմարտութիւն մ'է, ամեն ժամանակի գործ է, և զպրոցական հայեցողութիւնք չեն զօրեր առաջի պատմութեան:

ՊՐԵԶԻԼ

ԵՒ

ԿԱՅՍՐԻ ՈՒ ԿԱՅՍՐՈՒՀԻՄ ՊՐԵԶԻԼԻ

Հարաւային Ամերիկոյ այն ընդարձակածաւալ աշխարհն, որ յարևելից ունի սահման զԱտլանտեան Ովկիանոս, 'ի հարաւոյ զՈւրուկուայ, յարևմտից զՌիոյ Բլադայ, զԲարակուայ, զՊոլիվիա, զԲերու, Հասարակածի Տէրութիւններն և զՆոր կրանադա, իսկ 'ի հիւսիսոյ զկուայանա և զՎենեցիուելա, մեծ կայսրութիւն մը կը ձեացնէ, ուսկից հին տեղաբնակ ժողովուրդներն զրեթէ բոլորովին անհետացած են, թէպէտը ըստ ասելոյ ոմանց կան տակաւին մէկ քանի սակաւաթիւ ցեղեր: Կը հատանեն այս աշխարհը այլ և այլ ուղղութեամբ լերանց զանազան շղթաներ, որոց մէջ կենդրոնական շղթան որ կոչի լա Մէրրա Մանղիզուէյրա, ամեն լեռներէ աւելի բարձր կէտեր կ'ընծայէ, ինչպէս զՊուգուիրա որ 7,000 ոտք բարձրութիւն ունի, և զԲիդոյ տոս Օրկաոս որ մինչև 7,300 ոտք բարձրութեան կը հասնի, և կը ձգի դէպ հիւսիս: — կ'ոռոգանեն դարձեալ երկիրը բազում և մեծամեծ գետեր, որոց ամենքն ալ Ատլանտեան Ովկիանոս կը

թափին, և ասոնց մէջ զլիսաւորն է Ամազոն, որ հատանէ զՊրէզիլ յարևմտից յարեւելս:

Ունի Պրէզիլ բազում եղական կենդանիներ, ինչպէս ամերիկեան յովագ, տիտեռն, պօա օձ, ջայլամն, կապիկ, թութակ, թռչնաճանճ, բազմատեսակ սողուններ ու ճճիներ: Անուանի են նոյնպէս Պրէզիլի գոհարներն ու մետաղներն. ունի պատուական աղամանդ կաւուտ տեղեր ու գետոց մէջ. դարձեալ մեծ առատութեամբ մանր ու փոշետեսակ ոսկի: Ասոնցմէ զատ ունի և ուրիշ պատուական քարեր, ինչպէս տպազիոն, ամեթովս, և այն: Երկիրը արդաւանդահող ու բարերեր է, և սովորական բերքերն են՝ շաքար, քաֆէ, գագաոյ, ծխախոտ, բամբակ. ունի և տեսակ մը փայտ պրէզա անուն, ուսկից առաջ եկած կը համարուի և աշխարհին Պրէզիլ յորջորջումը:

Պրէզիլը գտաւ առաջին անդամ յամին 1500 վինդենտիոս Եանէզ Բինցոն սպանիացին, և բորդուգալցի Ալվարէզ Գապրալ նաւապատն, նաւակոծութեամբ դիպուածով իյնալով այն տեղը որ կոչի այժմ Բորդոյ Սէկուրոյ, անքոյք նաւահանգիստ: Ապա յամին 1501 ճանապարհորդեց անդ Ամերիկոս վեսրուչի, յանուն թագաւորին Բորդուգալաց Էմմանուէլի: Գապրալ 'ի սկըզբան այդ երկիրը Վերա Քրուզ անուաներ էր, բայց ապա փոխուեցաւ և ըսուեցաւ Պրէզիլ պրէզա փայտէն, ինչպէս վերը ըսինք:

Առ ժամանակ մի այս գաղթականութիւնը երեսէ ձգուած մնաց, բայց յամին 1525 Բորդուգալի թագաւորն Յովհաննէս Գ. տասուերկու դաւառ բաժնեց աշխարհը, և յանձնեց այլ և այլ գաղթականութեանց, պայմանաւ որ պիտի մշակեն: Այս այսպէս ըլլալով Բորդուգալցի գաղթականք նուաճեցին կամ հալածեցին մարդակեր ժողովուրդները, ու զանազան քաղաքներ շինեցին, ինչպէս զՄան Սալվատոր յամին 1549, և զՈՒիոյ Ժանէյրոյ յամին 1757: Եւ այս վերջինս քիչ ժամանակուան

մէջ այնպէս ծաղկեցաւ և յառաջադիմեց, որ եղաւ մայրաքաղաք կայսրութեան յամին 1863: Այս քաղաքը դէպ 'ի ծով երկնցած ցամաքի վրայ շինուած է, երկու կուանիդէ բլրոց մէջ, որոց բարձրութիւնն է 6-700 ոտնաչափ: Ոիոյ Ժանէյրոյ Հարաւային Ամերիկոյ քաղաքաց մէջ ամենէն հարուստն ու գեղեցիկն է. և Ս. Աննա դաշտը երկու կը բաժնէ զքաղաքը. առաջին մասին մէջ ցամաքին հիւսիսակողմը բըլրոց վրայ կայ հին քաղաքը, և զլիսաւոր շէնքերն են Յիսուսեանց վարժարանը, մայր եկեղեցին, եպիսկոպոսին պալատը. նոր թաղ մ'ալ շինուեցաւ, որ կը տարածուի ինչուան Գորգովատոյ Հովիտը, յորում կայ Տիրամօր գեղեցիկ եկեղեցին: Մեծ հրապարակը նաւահանգիստին մօտ է, յորում կանգնեալ է ինքնակալին պալատը. հրապարակին մէջ տեղը մեծ աղբիւր մը կայ, ուր Գարիոքա Ջրանցը ջուր կը բերէ Գորգովատոյ լեռնէն: Հասարակաց ճեմելիքներն ծովեզերքի մօտ՝ շատ գեղեցիկ են. փողոցները բարեյարդար, այլ ոչ այնշափ լուսաւորք: Ոիոյ Ժանէյրոյի կրթարանաց մէջ նշանաւոր են բժշկութեան, վիրաբուժութեան, գեղարուեստից, իրաւագիտութեան, նաւարկութեան դըպրոցներն. համբաւաւոր է նոյնպէս զինուորանոցը, մատենադարանը, բուսաբանութեան պարտէզը քաղքէն դուրս, վաճառականաց ժողովատեղը, թէտրոնը, զինարանը, գեղ արուեստից պալատը, դրամատունը, եկեղեցիներն իրենց ճոխ զարդերով:

Յամին 1808 երբ Գաղղիացիք արշաւեցին 'ի Բորդուգալ, Պրականցա արքունական ընտանիքը ապաստանեցաւ 'ի Պրէզիլ. որով նոր թուական մ'ըսկըսաւ այն աշխարհին համար, որ մինչև ցայնժամ ընկճեալ կը հեծէր ապօրինաւոր մենավաճառութեան լուծին տակ, որոյ վերայ հիմնեալ էր գաղթականութեան դրութիւնն: Վերցան այն օրէնքներն որք կ'արգելուին մտնել Պրէզիլի նաւահանգիստները Բորդուգալցի նաւէն զատ ուրիշ նաւ, և թող չէին

տար Պրէզիլի Ժողովրդեան ո՞ր և է ա-
րուեստական յառաջադիմութիւն։ Ան-
ձամբծ ճամբաներ բացուեցան, նորա-
նոր քաղաքներ շինուեցան, այլ և
այլ ուսմանց դպրոց-
ներ հաստատուեցան,
և քիչ ժամանակի մէջ
այնպիսի յառաջադի-
մութիւն և երջանկու-
թիւն ունեցաւ աշ-
խարհը, որուն և ոչ
իսկ գաղափարը կամ
ճաշակը ունէին յա-
ռաջագոյն : — Բայց
բնական բան մ'է որ
երբ աշխարհ մը այս-
քան կը յառաջադի-
մէ, կը փափաքի և իր
անկախունք։ Խսկզբան
յամին 1815 այնպէս
կարծուեցաւ թէ Պրէ-
զիլի թագաւորական
տիտղոս տալով միայն
պիտի կարենան հան-
դարտել ժողովուրդը,
ջանալով մի և նոյն ա-
տեն նուաճել զՊրէզիլ
գաղթականութեց զը-
րութեանց ներքեւ։ Ա-
սիկա ամեննին օդուտ
չունեցաւ, այլ մանա-
ւանդ փութացուց զժո-
ղովուրդը որ հրատա-
րակէ անկախութիւն.
որոնք զսահմանադրա-
կան կայորութիւն ըն-
տրելով իրեւ տէրու-
թեան կառավարու-
թիւն, զՃոն Բետրոյ,
զորդին Յովհաննու ար-
քային Բորդուգալաց
ընտրեցին ինքնակալ:
թէպէտ լիզպոնայի
կառավարութիւնը չը-
հաճեցաւ այս բանիս, բայց գործոյն
կատարուելէն երեք տարի ետքը յամին
1825 բունի ստիպուեցաւ ճանչնալ այդ
նոր տէրութիւնը, զոր սկզբան իրեւ ի-

րեն շահուն դէմ չէր ուղեր ճանչ-
նալ:
Ճոն Բետրոյ այր քաջակիրթ և բա-
րեբարոյ, ազատական սահմանադրու-
այլ ուսմանց դպրոց-



ԿԱՅՍԵՐԻ ՈՒ

թիւն մը հրատարակեց, բայց այնու-
հանդերձ իրեն դէմ զինեցան սաստակա-
պէս հասարակապետական դաշնաւո-
րական վարչութեան կուսակիցներն, և

Երեսը կը զարնէին 1823 ամին Սահմանադիր ժողովոյն լուծումը, առ Բորդուգացիս ցուցած նախամեծար սիրելութիւնն, և յետ եռամեայ անօդուտ

տէրութեան մեծամեծաց, բռնադատուեցաւ յամին 1831 հրաժարիլ ամուէն ու Եւրոպա դառնալ, թողլով իշխանութիւնը իր որդւոյն, որ յայնժամ դեռ վեցամեայ էր:

Տոն Բետրոյ Բորուն այժմ պաշտօնական տիտղոսն է՝ կայսր սահմանադրական, և հաստատուեն ու հաշատարիմ պաշտպան Պրէզիլի, որ տարւոյս դեկտեմբերի 26-ի իր կենաց քառասներորդ ութերորդ շրջանին մէջ պիտի մտնէ, որդի է Տոն Բետրոյի առաջնոյ որ մեռաւ յամին 1834, և կայսրուհւոյն Լէոբոլտինայի արշիդքսուհւոյ Աւստրիոյ:

Երբ 1834-ի ապրիլի 7-ին Հայրը Տոն Բետրոյ Ա. հրաժարեցաւ 'ի թագաւորութենէն, սա անցաւ իր տեղը, բայց բունքացարձակ տիրութիւնն ստացաւ յամին 1840 յուլիս 23: Կայսր պատակուեցաւ 1841-ի յուլիսի 18, և յամին 1843 առաւ իւր 'ի կնութիւն զթերեզաքաֆրիստինա Մարիա, ծնեալ յամին 1822 մարտ 14, դուստր Ա. Փրանկիսկոսի թագաւորին Երկուց Սիկիլեայց:

Այս ամուսնութենէն ծնան Երկուդստերք, իշխանուհին իգապելլա ծնեալ 'ի 29 յուլիսի 1846, և իշխանուհին Լէոբոլտինա, ծնեալ 'ի 13 յուլիսի 1847:



ՔՈՒՅԻՆ ԳՐԵՑԻԼԻ

պաշտպանութեան զլլոնդէվիտէօ թողուն: Եւ այսպէս իր մէկ քանի խըստութեանցը, հրամանացը և դործոցը համար ատելի ըլլալով ժողովրդեան և

Այս ամուսնութենէն ծնան Երկուդստերք, իշխանուհին իգապելլա ծնեալ 'ի 29 յուլիսի 1846, և իշխանուհին Լէոբոլտինա, ծնեալ 'ի 13 յուլիսի 1847:

Ասոնց առաջինն՝ իշխանուհին իղապելա, յամին 1864 ամուսնացաւ ֆիլիպպոս Մարիա ֆերդինանտոս կասդոն իշխանին հետ, որ էր որդի դքսին Նէմուրի և թոռն լուդովիկոսի ֆիլիպպոսի երբեմն արքային գաղղիոյ։ Իսկ երկրորդ իշխանուհին լէորոլտինա ամուսնացաւ վերանշանակեալ տարւոյն մէջ՝ Աւգոստոսի լուդովիկոսի Վիկորիոյ իշխանին հետ, որ էր որդի դքսին Սաքսոնիոյ Քոպուրկի, բայց վախճանեցաւ՝ ի վեննա յամսեանն փետրուարի յամին 1874։ Իշխանուհւոյն ոսկերքը կը հանգչին արդ Քոպուրկի ուղղափառաց եկեղեցւոյն մէջ իր ամուսնոյն հօրը ոսկերաց մօտ։ որուն այցելութեան գնաց Պրէզիլի կայսրն՝ երբ նոյն տարւոյն մէջ կ'ուղեսորէր ընդ բոլոր Եւրոպէ, աղօթելու իր դստերը գերեզմանին վրայ։

Նոյն ուղեսորութեան ատեն գնաց՝ ի Լոնտուա,՝ ի Բարիզ,՝ ի Պեոլին,՝ ի Վենենա,՝ ի Հռովմ և ուրիշ մեծամեծ քաղաքներ։ յորոց միջի չմոռացաւ և զլենետիկ յիշատակաց քաղաքը։ և ինչ որ ըրեր էր նոյն վերոյիշեալ մեծամեծ քաղաքաց մէջ, նոյնը ըրաւ և՝ ի Վենետիկ։ այն է քննել, հետազօտել մեծաւ մոադրութեամբ երևելի յիշատակարանները, գիտութեանց տեղուանքը, գպրոցներն, եկեղեցիներն և ճարտարութեանց գործարաններն, որոց միջի և զՄիթարայ վանքը զԱ. Ղազար։ Իր այս ճանապարհորդութեան նպատակն ուրիշ բան չէր, բայց եթէ Եւրոպական ժողովրդոց մոտաւոր, բարոյական, տրնտեսական և քաղաքական յառաջադիդիմութիւններն յօդուտ գործածել Պրէզիլի։ Եւ Պրէզիլի ժողովուրդն որ փափաքանօք կը սպասէր իրեն կայսեր վերադառնալուն՝ մեծաւ հանդիսիւ ու սիրոյ ցոյցերով ընդունեցաւ զինքը։

Տոն Բետրոյ Բ. թէպէտ իր կայսրութեան առաջին տարիներուն մեծամեծ նեղութիւններէ անցաւ, բայց սկսեալ յամէ 1844 մինչև ցայսօր ամենսին չայլայլեցաւ երկրին խաղաղութիւնը։ Սահմանադրութեան ճիշտ և հաւատարիմ պահպանութեամբը սիրելի ընծառական առաջին առաջին տարին յամին 1869 գերեվաճառութեան օրէնքը ջնջեց։ իր արդարութիւն և յառաջադիմութիւն սիրող բարքը նոյն իսկ Բարակուայի պատերազմին մէջ ցուցուց, ուր յաղթութիւնն

յեց զինքը ժողովրդեան։ Հետամուտ և սիրող է գիտութեանց, ուստի ոչ միայն նախագահ այլ և գործունեայ ընկեր է Ռիոյ Ժանէյրոյի պատմական – աշխարհագրական ճեմարանին, որուն ամեն գումարմանցը անպակաս ներկայ կը գտնուի։ Դարձեալ բազում անգամ կ'երթայ առաջիկայ ըլլալու վարժարանաց հասարակաց քննութեանցը, և ոչ միայն պարզ առաջիկայ կը գտնուի, այլ և շատ անգամ ինքը անձամբ կը քննէ զուսանողս։ Այցելութեան կ'երթայ ստէպ և անակնկալ հիւանդանոցաց և հասարակաց բարերարական տեղեաց, և կը քննէ մի առ մի հիւանդաց սրահներն, խոհակերոցներն և կերակուրներն։

Կայսրը ունի իրեն օգնական՝ ի կառավարութիւն Պրէզիլի և երկու խորհրդասենեակներ, մին երեսիսիսանաց և միւսը ծերակուտին, որոց պաշտօնը մինչև ցկեանս կը տեսէ, և անուանեալ են՝ ի քաղաքացեաց։ Բայց և ամեն գաւառ ունի առանձին նախագահ՝ ի կառավարիչ՝ անուանեալ յինքնակալէն, և օրէնսդիր ժողով՝ որ կը խորհիւ տեղական գործոց և պիտոյից վրայ։

Սահմանադրական ազատութիւնը այնպէս տիրած է՝ ի Պրէզիլ, որ քսան և հինգ տարիէ՝ ի վեր ժողովրդեան և ոչ մոքէն կ'անցնի պետական հարուած և կամ յեղափոխական շփոթութիւն։ Կայ հակառակախոհ կուսակցութիւն մը՝ որ բաւական զօրաւոր է եթէ՝ ի տպագրութիւնս և եթէ՝ ի ժողովս երեսիսանաց, բայց իրենց խնդիրը պաշտօնէից հետ է և ոչ տէրութեան կառավարութեան հետ։

Ցո՞ն Բէտրոյ թէպէտ իր արդարասիրութեամբն ու ազատախոհ բարուքն միշտ սիրելի եղեր էր ժողովրդեան, բայց աւելի ևս արժանացաւ իր հպատակացը սիրոյն և բոլոր աշխարհի համարմանը, երբ յամին 1869 գերեվաճառութեան օրէնքը ջնջեց։ իր արդարութիւն և յառաջադիմութիւն սիրող բարքը նոյն իսկ Բարակուայի պատերազմին մէջ ցուցուց, ուր յաղթութիւնն

ուրիշ բանի չծառայեցուց, բայց եթէ ըստ կարի շարժել և յորդորել զբնակիչս երկրին՝ ի սէր անկախութեան և յառաջադիմութեան։

=====

ՆԱԲՈԼԵՈՆ Գ. 1

Յիրաւի անսովոր ինչ էին, յետ մահու կայսեր Նաբոլէոնի գ. այն իրարու հակառակ դատաստաններն այնպիսի մարդու մը վրայ՝ որ քսան տարւոյ չափ կալաւ՝ ի ձեռին մեծ ազգի մը բախտը. և նոյն ժամանակին շրջանին կէսերուն, տիրեց և Եւրոպիոյ քաղաքադիտութեան վրայ։ Գովութիւնն ու պարսաւանքն, զարմանքն ու Երախտագէտ սէրն, ատելութիւնն ու արհամարհանքը, չգտան բառագրոց մէջ բաւական բացատրութիւն։ Ոմանք տկար քաղաքագէտ կոչեցին զինքը և այլք ճարտար արուեստի կառավարութեան, կէսք բախտախնդիր և աւազակ, և այլք բարերար Եւրոպիոյ անուանեցին։ Այս իրարու բոլորովին հակառակ վերադիրներն կրկնուելով կրիք՝ ի ժողովրդոց և ի սոսկական մարդկանէ, իրարու բախէին և զիրար եղծանէին։ Իսկ ինքն Նաբոլէոն գ. կը մեռնէր անձայն լութեամբ որպէս և կեցեալ էր, անիմանալի դաղտնեաց մէջ թողլով հասարակաց կարծիքն և իր ժամանակակիցներն։ Սակայն այս ինչ միշտ ստոյգ է, որ այնպիսի կենաց ընթացք վարող և այնքան կիրքեր գրգռող մարդն չի կը նար ոչ աննշան և ոչ սովորական մարդ ըլլալ։ Չեմք կրնար կարդել զնա բար-

1. ♀. Հենրիկոս Սիպըլ գերմանացի մեծանուն պատմաբանն՝ հրատարակեց այս վերջերս Նաբոլէոն Գին վարքը, ոտն առ ոտն առաջնորդելով ընթերցողին մինչև վերջին աղետալի պատերազմը։ Անաշառ դատելով ♀. Սիպըլի այս գրուածքը, կըսեմք որ մեծ յարգ ունի առաջի պատմութեան, զոր և մենք թարգմանելով կը հրատարակեմք, առանց յանձն առնելու պատասխանատու ըլլալ, եթէ ընթերցողք նշմարեն ուրեք ուրեք չափազանց խորհրդածութիւններ՝ ի գովեստ կամ՝ ի պարսաւ Նաբոլէոնի Գի. կայսեր Գաղղիոյ։

Եղ կամ չարի, մեծի կամ փոքու պարզ դասակարգութեան մէջ. կը տեսնեմք վրան յաջորդաբար կամ՝ ի միասին զանազան յատկութիւններ. միշտ տարբեր քան ինչ որ վրան գաղափար տուածէ, միշտ գործօն հանդերձ իրեն առերևոյթ անգործութեամբն, միով բանիւ միշտ անփոփոխ՝ նոյն իսկ՝ ի ժամանակս մեծամեծ փոփոխութեանց . . . :

Եւ զի պիտի քննեմք զնաբոլէոն գ. առաջի պատմութեան, զիտողութեամբ մը սկսիմք զայն, որ կարևոր թուի մեզ իրեւ անջատման կէտ այս քննութեան։ Նաբոլէոն գաղղիացի չէր որպէս և իր հօրեղբայրը, և թերեւսնուազ քան զինքը ըստ բարոյական նշանակութեան բառին։ Հօրեղբայրն, ամբողջապէս իտալացի, և մինչև իր քսանամեայ հասակը անողոքելի ատելութեամբ վառեալ ընդդէմ գաղղիացւոց նուաճողաց իր հայրենի կղզւոյն, գաղղիացի գրեցաւ երբ տեսաւ որ գաղղիական յեղափոխութիւնն իր փառասիրութեան առջին փառաց ընդարձակ դաշտ կը բանար. բայց զայս այն նպատակաւ ըրաւ որպէս զի զգաղղիան իրեւ գործի առնու իր վախճանին հասնելու։ Եղբօրորդին Նաբոլէոն գ. որ Բարիկ ծնած էր, գոնէ մօր կողմանէ երակացը մէջ գաղղիացւոյ արիւն ունէր. բայց բախտը այնպէս ճակատագրեր էր որ իր վեցամեայ հասակէն մինչև քառասնամեայ հասակը, այսինքն կենաց այն ժամանակը յորում մարդկային բնութիւնը կերպաւորի և հաստատի, ապրի ամենայն երկիր բաց ՚ի գաղղիոյ. Գաղղիոյ ուրիշ բանին տեղեկութիւն չունէր բայց եթէ բանտի մ'որմոցը, ուր եղաւ իր կրկին եղեռանցը համար։ Ուսման մեծագոյն մասը Աւկըսպուրկի գերմանական վարժարանին մէջ կատարեց, և զինուորական հրահանգը՝ ՚ի Զուիցերի. աշակերտեցաւ յիտալիա հասարապետական ուամկավարութեան դպրոցին, և ուսաւ քաղաքագիտութեան ուսումը՝ ի մէջ Անդղիացւոց և Ամերիկացւոց. միով բանիւ բոլոր իր գիտութիւնը և մտաւորական ոյժը պարտական է հինգ զանազան քաղաքակըր-